


# ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՈՃԻՐՆԵՐՈՒ ԴԻՄԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ԽՈՆԱՐՀԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌՋԵԻ



Անսպասելի սպանություններ տեղի ունեցան Ատրպեյճանի այն ֆաղաֆներուն ու շրջաններուն մէջ, ուր հայ ազգաբնակչութիւն գոյութիւն ունի: Հակազդելու համար Հայաստանի եւ Ղարաբաղի մէջ տեղի ունեցող խաղաղ ցոյցերուն, ժողովուրդի թշնամիները դիմեցին իրենց անանդական գործնականերպին՝ ոճիւրներու: Արտասահման հասնող լուրերու համաձայն, զոհերու թիւը շատ անելի բարձր է քան պաշտօնապէս յայտարարուածը: Մեր երրորդ էջին վրայ լոյս տեսած ԿՐՕՆԱՄՈՒՆԵՐԸ ԿԸ ԽԼՐՏԻՆ խորագիրը կրող յօդուածին մէջ նշուած 33 զոհերը, այսօրուան դրութեամբ, նկատի ունենալ անելի քան հարիւր մարդ: Սպանութիւնները եղած են կազմակերպուած եւ մտածուած: Վիրաւորներուն թիւը նոյնպէս բարձր է. ըստ անգլիական մամուլին անելի քան հազար վիրաւորներ կը գտնուին հիւանդանոցներուն մէջ: Բազմաթիւ հայերու բնակարանները հրոյ



ԵՐԵՎԱՆԻ ՄԷՋ, ԺՈՂՈՎՈՒՐԸ ՂԱՐԱԲԱՂԸ ԿԸ ՊԱՀԱՆՋԷ

ճարակ դարձած են, մինչ տասնեակ հայկական գիւղեր դատարկուած են իրենց բնակչութենէն: Հազարաւոր գաղթականներ ապաստանած են Հայաստանի եւ Միութեան տարբեր ֆաղաֆներուն

մէջ: Մարտի 7-ը սուգի օր էր Հայաստանի տարածքին վրայ: Իսկ Մարտի 8-ը, ըլլալով պետական տօն մը, փակ էին, »»» էՃ 3

# ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ ՈՃԻՐՆԵՐՈՒ ԴԻՄԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԿԸ ԽՈՆԱՐՀԻ ԶՈՀԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ ԱՌՋԵԻ

ՇԱՐ. ԷՋ 1-ԷՆ

Ինչպէս Միութեան, այնպէս ալ Հայաստանի բոլոր հաստատութիւնները, գործարաններն ու շուկաները Մարտի տասէն սկսեալ երեք օրուայ համար, գործադուլ յայտարարուած է Հայաստանի մէջ, որպէս բողոքի նշան: Կ'ակնկալուի, որ բողոքի նոր ցոյցեր տեղի ունենան Հայաստանի քաղաքներու մէջ, որպէսզի պատժուին ժողովուրդի թշնամիները՝ ռեալագործներն ու զանոնք հրահրողները:

Սովետական Միութեան սահմաններուն մէջ ծուարած ՓԱՆԹՈՒՐԱՆԻԶՄԻ եւ ՓԱՆԻՍԼԱՄԻԶՄԻ գործակալները, ռեալագործելով անմեղ հայերու դէմ, թիկունքէն հարուածեցին ժողովուրդներու բարեկամութիւնը, որը հիմնաւարն է Սովետական բազմազգ պետութեան: Հարուածը հասաւ նաեւ վերակառուցման գործընթացին եւ մարդկային իրաւունքներուն:

Եթէ չզսպուին խռովարարներն ու ռեալի ատակ մութ ուժերը, կացութիւնը կրնայ բարդանալ եւ հետեւանքները աննախատեսելի են: Հայաստանի քաղաքական եւ հոգեւոր առաջնորդները ժողովուրդին հանդարտութեան կոչ ըրին(այս թիւով կարդալ՝ Կարէն Դեմիրճեանի եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ելոյթները): Անոնք միաժամանակ անտեղիտալի կերպով կը հետապնդեն Ղարաբաղը Հայաստանին վերամիացնելու եւ ռեալագործները պատժելու հարցերը: